27
ՓԵՏՐՎԱՐԻ
2020

Luys Լույս®

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ 1

2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) 2

2.1. Ծառայություններ 3

2.2. Արդյունաբերություն 5

2.3. Գյուղատնտեսություն 6

3. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 7

4. ԱՄՓՈՓՈՒՄ 8

1. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ

2018թ. ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից հետո առաջին ամբողջական տարին 2019 թվականն էր: Հետևաբար, 2019-ին գրանցված տնտեսական ցուցանիշները կարող են օգտագործվել նոր կառավարության կողմից հռչակված «տնտեսական հեղափոխության» հաջողությունը գնահատելու համար:

Եվ այսպես, ՀՀ տնտեսական աճը 2019-ին կազմել է 7.6 տոկոս: Արդյո՞ք սա «հեղափոխական» ցուցանիշ է: Ըստ բազմաթիվ կարծիքների, այդ թվում՝ կառավարության, պատասխանը դրական է, և այս ցուցանիշը «հեղափոխական» է մի քանի պատճառներով. նախ՝ այն ՀՀ-ում գրանցված ամենաբարձր ցուցանիշն է սկսած 2008-ից, երկրորդ՝ այս աճը բարձր է ինչպես համաշխարհային միջին աճից, այնպես էլ տարածաշրջանի երկրների աճերից, երրորդ՝ այն հիմնված է մշակող արդյունաբերության աճի վրա:

Սակայն այս պնդումները զուրկ են լուրջ հիմնավորումից և քննադատության չեն դիմանում: Այս վերլուծության նպատակն է բացահայտել, թե արդյո՞ք 2019-ին գրանցված տնտեսական աճը բավարար է «տնտեսական հեղափոխությունը» հաջողված համարելու համար:

Իսկապես, ՀՀ տնտեսական աճը 2019-ին ավելի բարձր է, քան նախորդ տարիներին (տե՛ս Գծապատկեր 1), սակայն, նույնիսկ չանդրադառնալով մինչճգնաժամյան (2001-2007թթ.) բարձր տնտեսական աճերին, կարող ենք նշել, որ 2019-ի ցուցանիշին մոտ արդյունքներ գրանցվել են նաև այլ տարիների՝ 2012-ին՝ 7.2% և 2017-ին՝ 7.5%: Ստացվում է, որ «տնտեսական հեղափոխությունը» ենթադրում էր ընդամենը 0.1 կամ 0.4 տոկոսային կետով տնտեսական աճի արագացում: Հակառակ դեպքում կարող ենք պնդել, որ նախորդ տարիներին առնվազն երկու անգամ գրանցվել է «հեղափոխական» տնտեսական աճ:

Գծապատկեր 1. ՀՀ տնտեսական աճը, 2001-2019թթ., %



2019թ. ՀՀ տնտեսական աճը գերազանցել է համաշխարհային տնտեսության 3.0%, ԵՄ-ի 1.5% և զարգացող երկրների 3.9% սպասվող աճերը[1]: Սակայն 2012 և 2017 թվականներին ՀՀ տնտեսական աճը նույնպես գերազանցում էր նշված տարածաշրջանների, ներառյալ ՀՀ հարևան երկրներում գրանցված ցուցանիշները: Հետևաբար, համեմատելով այլ երկրների հետ, նույնպես ոչ մի աննախադեպ երևույթ չենք կարող գրանցել:

Տնտեսական աճի ցուցանիշը, որը նույն ՀՆԱ-ի իրական աճն է, դեռևս բավարար չէ երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական զարգացումները բնութագրելու համար: Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել տնտեսական աճի կառուցվածքը, նպաստող գործոնները և ներառականությունը, որպեսզի պարզ լինի, թե որքանով է այդ աճը կայուն և որքանով է նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)

2019թ. տնտեսական աճին ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը եղել է ծառայությունները, որի միջոցով ապահովվել է տնտեսական աճի 5.3 տոկոսային կետը: Արդյունաբերության նպաստումը կազմել է 1.9 տոկոսային կետ, իսկ գյուղատնտեսությունն ունեցել է բացասական նպաստում՝ 0.5 տոկոսային կետով:

[1] Աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներ, 2019թ. հոկտեմբեր:

Գծապատկեր 2. Ճյուղերի նպաստումները տնտեսական աճին, տոկոսային կետ[2]



Եթե համեմատենք նախորդ՝ բարձր տնտեսական աճ գրանցած տարիների հետ, ապա ակնհայտ է, որ այս առումով տնտեսական աճի կառուցվածքը վատթարացել է:

Այսպես՝ 2012թ. արդյունաբերության և գյուղատնտեսության նպաստումները տնտեսական աճին կազմել էին համապատասխանաբար 1.1 և 1.9 տոկոսային կետ, այսինքն՝ այս երկու ճյուղերը միասին՝ 3.0 տոկոսային կետ, այն դեպքում, երբ ծառայությունների ոլորտը նպաստել էր 2.4 տոկոսային կետով:

2017թ., թեև արդեն սկսել էր ծառայությունների աճի արագացումը, սակայն արդյունաբերության նպաստումը ավելի բարձր էր (2.1 տոկոսային կետ), քան 2019-ին:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա այն վերջին տարիներին շարունակ նվազման միտում է ցուցաբերում: Սակայն, առանց հաշվի առնելու այդ փաստը, նոր կառավարությունը, ի պատասխան դրան, փակեց գյուղատնտեսության նախարարությունը, ինչը, բնականաբար, չնպաստեց այս ոլորտում խնդիրների ախտորոշմանը և լուծմանը:

2.1. Ծառայություններ

2019թ. ծառայությունների աճը կազմել է 10.2 տոկոս, ինչի շնորհիվ այս ճյուղը տնտեսական աճին նպաստել է 5.3 տոկոսային կետով, այդ թվում՝ առևտուրը աճել է 9.3%-ով, և ՀՆԱ-ի իրական աճին նպաստել է 1.1 տոկոսային կետով:

[2] Գծապատկերում ներկայացված են 2001-2008թթ. միջին ցուցանիշները, 2009թ. ցուցանիշները և հետճգնաժամյան տարիներին բարձր տնտեսական աճ գրանցած տարիների ցուցանիշները:

Գծապատկեր 3. Ծառայությունների (առանց առևտրի) աճերը և նպաստումները, 2019թ.



Ծառայությունների կառուցվածքում ամենաարագ աճն ունեցել են «կացություն և հանրային սննդի կազմակերպում» և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղերը՝ համապատասխանաբար 27.2% և 22.0%: Վերջիններիս նպաստումը ծառայությունների աճին կազմել է համապատասխանաբար 1.2 և 2.8 տոկոսային կետ:

Այս ենթաճյուղերի աճը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման կտրուկ աճով: Այսպես՝ *«ֆինանսական և ապահովագրական գործունեություն»* ենթաճյուղի գերակշիռ մասը ֆինանսականն է, իսկ դրա մեջ ավելի քան 30 տոկոսով աճել են սպառողական վարկերը, որոնց թվում՝ «այլ սպառողական վարկերը», որոնք էլ ուղղվել են մեքենաների ներմուծմանը, աճել են 50.3 տոկոսով: Սա վտանգավոր է, քանի որ բնակչության եկամուտները չեն աճել դրան համապատասխանող չափով, իսկ ներմուծված մեքենաների վաճառքի հնարավորությունները խիստ անորոշ են, հետևաբար, նշված աճերը կարող են հանգեցնել երկարաժամկետ խնդիրների ֆինանսական հատվածում:

Ինչ վերաբերում է *«կացություն և հանրային սննդի կազմակերպում»* ենթաճյուղի աճին, ապա այն նույնպես պայմանավորված է մեքենաների ներմուծմամբ, քանի որ բազմաթիվ ԵԱՏՄ երկրների քաղաքացիներ, գալով Հայաստան, մեքենա գնելու նպատակով օգտվել են կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայություններից, ինչի հաշվին ապահովվել է ենթաճյուղի աճը: Հարկ է նշել, որ «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի բարձր աճը հաճախ սխալմամբ ներկայացվում է որպես զբոսաշրջության աճը հավաստող ցուցանիշ:

Ստացվում է, որ ծառայությունների բարձր աճը, որը նաև առավելապես նպաստել է տնտեսական աճին, կայուն չէ, քանի որ 2020 թվականին մեքենաների ներմուծման երևույթն այլևս չի լինելու, հետևաբար «կացություն և հանրային սննդի կազմակերպում» և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղերի աճերը, որոնք ապահովել էին տնտեսական աճի 1.7 տոկոսային կետը, այլևս չեն շարունակվի:

Ինչ վերաբերում է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղին, որը վերջին տարիներին տնտեսական աճի «շարժիչ ուժն» է հանդիսանում, ապա այն ևս զգալի աճել է՝ ծառայությունների աճին նպաստելով 1.4 տոկոսային կետով: «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի կառուցվածքում գերակշիռ մասը զվարճություններն են, իսկ դրանց կառուցվածքում՝ շահումով խաղերը և խաղատները, որոնց բացասական կողմերի մասին բազմիցս խոսվել է:

Այսպիսով, ծառայությունները՝ որպես տնտեսական աճին ամենաշատ նպաստող ճյուղ, ունի բավական խնդրահարույց կառուցվածք, քանի որ այն կայուն չէ և հղի է երկարաժամկետ խնդիրներով:

2.2. Արդյունաբերություն

Արդյունաբերության աճը 2019թ. կազմել է 10.2 տոկոս՝ տնտեսական աճին նպաստելով 1.9 տոկոսային կետով: Սա բարձր ցուցանիշ է, սակայն աննախադեպ չէ, քանի որ 2017-ին արդյունաբերության աճը կազմել էր 11.8 տոկոս և տնտեսական աճին նպաստել էր 2.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 4. Արդյունաբերության աճը և նպաստումները աճին, տոկոսային կետ



Արդյունաբերության կառուցվածքի տեսանկյունից դրական փոփոխություններ չեն նկատվում: Հանքարդյունաբերության փոխարինումը մշակող արդյունաբերությամբ այդպես էլ իրականություն չդարձավ: 2019թ. տարեսկզբին, երբ հանքարդյունաբերությունը անկում էր գրանցում, վարչապետը շտապում էր

հայտարարել, որ դա տնտեսական հեղափոխության արդյունքն է, և տնտեսության աճը արդեն պայմանավորված է լինելու բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված մշակող արդյունաբերությամբ: Սակայն այժմ, տարեկան արդյունքներով կարող ենք փաստել, որ հանքարդյունաբերությունը նպաստել է ընդհանուր արդյունաբերության աճին մոտ 3.3 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 4): Այսինքն՝ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսական աճին դեռևս ականատես չենք լինում:

2.3. Գյուղատնտեսություն

Արդեն չորս տարի շարունակ գյուղատնտեսության ճյուղը գրանցում է բացասական ցուցանիշներ: Նոր կառավարությունն անընդհատ հայտարարում է գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի և դրանց հաջող լինելու մասին, սակայն փաստացի տվյալներով դա չի երևում:

Այդ ծրագրերի մեծ մասը նախագծվել է դեռևս նախորդ կառավարության ժամանակ, սակայն, նոր իշխանությունները որոշում կայացրին փակել գյուղատնտեսության նախարարությունը՝ վտանգի տակ դնելով այդ ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը: Դրա մասին են խոսում նաև փաստացի տվյալները: 2019թ. գյուղատնտեսության անկումը կազմում է 4.0 տոկոս, նախորդ տարի այն կազմել էր 8.5 տոկոս: Այս պատկերից հետևում է, որ գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության ստեղծած արդյունքը նվազել է, հետևաբար նվազել է նաև նրանց եկամուտը՝ հանգեցնելով կենսամակարդակի անկման:

Գծապատկեր 5. Գյուղատնտեսության աճը, %



3. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզել, թե ստեղծված արդյունքի որ մասն է ներդրվել, և որ մասն է ծախսվել ընթացիկ սպառման վրա:

2019թ. արդյունքներն այս առումով նույնպես մտահոգիչ են: Այսպես, 2019-ին ՀՆԱ-ի 7.6 տոկոս իրական աճին 10.4 տոկոսային կետով նպաստել է ընթացիկ սպառումը, իսկ ներդրումներն ունեցել են բացասական նպաստում՝ 1.2 տոկոսային կետով: Այսինքն՝ ներդրումները հիմնական կապիտալում ոչ միայն բավարար չափով չեն աճել, այլև նախորդ տարվա համեմատ նվազել են 5.2 տոկոսով: Պետք է նշել, որ նախորդ տարիներին սպառման և ներդրումների նման վատ հարաբերակցություն չէր գրանցվել:

Գծապատկեր 5. Տնտեսական աճը և ծախսային բաղադրիչների նպաստումները, տոկոսային կետ



Ներդրումների նվազմանը նպաստել է նաև պետական բյուջեի թերակատարումը, քանի որ նախատեսված չափով պետական կապիտալ ներդրումները չեն իրականացվել: Հայտնի է, որ ցածր ներդրումները հանգեցնում են ենթակառուցվածքների և կապիտալի մաշվածքին և նվազմանը, հետևաբար նվազում են հետագայում տնտեսական աճ գեներացնելու և եկամուտներն ավելացնելու հնարավորությունները:

Մասնավոր ներդրումների նվազումը պայմանավորված է տնտեսությունում անորոշությունների աճով: Երբ տնտեսվարողները չգիտեն ինչ սպասել կառավարությունից, ավելի հավանական է, որ նրանք կհետաձգեն երկարաժամկետ պլանները՝ սպասելով իրավիճակի ավելի կանխատեսելի դառնալուն: Սակայն, քանի որ նոր կառավարությունը բավականին դժվարությամբ և դանդաղ է որոշումներ ընդունում, ինչպես նաև չունի որևէ ռազմավարություն և

գերակայություններ, ուստի կարելի է սպասել, որ տնտեսությունում անորոշությունները չեն նվազի, և հավանաբար 2020-ին նույնպես ներդրումների զգալի աճ չի լինի:

Նախորդ տարվա համեմատ արագացել է ապրանքների և ծառայությունների արտահանման աճի տեմպը՝ կազմելով 10.3 տոկոս, և տնտեսական աճին նպաստել 3.9 տոկոսային կետով: Սակայն, այն դեռևս հեռու է 2017-ին գրանցված 18.7 տոկոս աճից, որը տնտեսական աճին նպաստել էր 6.2 տոկոսային կետով:

Ստացվում է, որ 2019թ. տնտեսական աճն ամբողջությամբ պայմանավորված է եղել ընթացիկ սպառման աճով: Այդ սպառումը զգալի չափով ֆինանսավորվել է սպառողական վարկերով, որոնք աճել են ավելի քան 30 տոկոսով: Բնակչության եկամուտներն այդ չափով չեն աճել, իսկ ներդրումների նվազումը պակասեցնում է ապագայում բնակչության եկամուտների ավելացման հնարավորությունները՝ վտանգելով հետագա տնտեսական աճը:

4. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ 2019թ. տնտեսական աճը մի փոքր ավելի բարձր էր քան նախորդ տարիներին գրանցված ցուցանիշները, սակայն այն պարունակում է մի շարք խնդրահարույց զարգացումներ, որոնց բացասական ազդեցություններն ի հայտ կգան սկսած 2020-ից: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ընդամենը 0.1 տոկոսային կետով տնտեսական աճի արագացումը չի կարող անվանվել «տնտեսական հեղափոխություն»:

Տնտեսական աճ ստեղծող ճյուղերը եղել են ժամանակավոր և չեն նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված երկարաժամկետ եկամտի աղբյուրների ստեղծմանը: Ընդլայնվում է այնպիսի ճյուղերի դերը, որտեղ հավելյալ արդյունք գրեթե չի ստեղծվում: Նման պայմաններում, բնականաբար, անիմաստ է մեծ հույսեր կապել տնտեսության ներառականության հետ: Տնտեսական աճի ազդեցությունը հեռու է ներառական լինելուց:

Արդյունաբերության կառուցվածքը որևէ դրական փոփոխության չի ենթարկվել և շարունակում է հիմնված մնալ հանքարդյունաբերության ոլորտի զարգացումների վրա:

Ներդրումների նվազումը վտանգի տակ է դնում ապագա տնտեսական աճի հնարավորությունները: Քանի որ, ինչպես ներքին տնտեսությունում, այնպես էլ արտաքին աշխարհում, որևէ նշանակալի տնտեսական ցնցումներ չեն գրանցվել, ուստի ներդրումների նվազումը հնարավոր է պայմանավորել միայն կառավարության կողմից ստեղծված անորոշ իրավիճակով: 2020-ին սպասվող նոր

քաղաքական ցնցումներն ավելի կխորացնեն անորոշությունը՝ վտանգելով տնտեսական աճը, զարգացումը և բնակչության կենսամակարդակի աճը:

Արտահանումը, որը ՀՀ տնտեսության համար կենսական նշանակություն ունի, 2019-ին հնարավոր եղավ վերականգնել միայն հանքարդյունաբերության աճի վերականգնման պայմաններում: Սակայն, նույնիսկ այս դեպքում արտահանման աճը այդպես էլ չմոտեցավ 2017-ին գրանցած ցուցանիշին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*